ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ» ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (4-ՐԴ ՀԵՐԹ)» ՆԱԽԱԳԾԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԹԻՎ 4 ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 28 մարտի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գ. Սանոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40-րդ հոդվածի 1-ին մասի և 74-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհային միջանցքի շինարարություն (4-րդ հերթ)» նախագծի ֆինանսավորման համար Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին»

համաձայնագրի թիվ 4 լրացուցիչ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2023 թվականի հունվարի 5-ի N 8-Ա որոշմամբ հավանություն է տվել 2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհային միջանցքի շինարարություն (4-րդ հերթ)» նախագծի ֆինանսավորման համար Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին» համաձայնագրի թիվ 4 լրացուցիչ համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրած պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2023 թվականի հունվարի 9-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Եվրասիական զարգացման բանկը 2006 թվականի հունվարի 12-ին Ռուսաստանի Դաշնության և Ղազախստանի Հանրապետության միջև կնքված «Եվրասիական զարգացման բանկի հիմնադրման մասին» համաձայնագրի հիման վրա ստեղծված և գործունեություն իրականացնող միջազգային կազմակերպություն է, որը հանդիսանում է Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցների կառավարիչ (այսուհետ նաև՝ Կառավարիչ) և հանդես է գալիս դրա մասնակիցների անունից և հանձնարարությամբ:

2. «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհային միջանցքի շինարարություն (4-րդ հերթ)»

նախագծի ֆինանսավորման համար Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին» 2015 թվականի ապրիլի 14-ին ստորագրված համաձայնագրի (այսուհետ նաև՝ Հիմնական համաձայնագիր) նպատակն է Հայաստանի Հանրապետությունում Ագարակից դեպի Քաջարան 20,5 կմ ձգվող «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհային միջանցքի հատվածում անցանելիության բարձրացումը և վթարների նվազեցումը:

Հիմնական համաձայնագրում ամրագրված պարտավորությունները Սահմանադրական դատարանի 2015 թվականի հունիսի 11-ի ՍԴՈ-1219 որոշմամբ ճանաչվել են Սահմանադրությանը համապատասխանող, ինչից հետո Հիմնական համաձայնագիրը վավերացվել է Ազգային ժողովի 2015 թվականի հունիսի 23-ի ԱԺՈ-166-Ն որոշմամբ:

3. Ըստ «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհային միջանցքի շինարարություն (4-րդ հերթ)» նախագծի ֆինանսավորման համար Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին» համաձայնագրի թիվ 4 լրացուցիչ համաձայնագրի (այսուհետ նաև՝ Լրացուցիչ համաձայնագիր) վերաբերյալ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղեկանք-հիմնավորման՝ համաձայն Եվրասիական զարգացման բանկի խորհրդի նախագահի 03.07.2017 թ. թիվ ԵՖՀ 17-71 գրության՝ Վարկային համաձայնագրով նախատեսված վարկային միջոցների հասանելիության ժամկետի ավարտ է սահմանվել 2022 թվականի դեկտեմբերի 31-ը, և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն իր լիազորությունների շրջանակում նպատակահարմար է գտնում վարկային միջոցների հասանելիության ժամկետի՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ը երկարաձգումը:

4. Լրացուցիչ համաձայնագիրը ստորագրվել է 2022 թվականի նոյեմբերի 17-ին Հիմնական համաձայնագրի հիման վրա՝ նկատի ունենալով լրացուցիչ դրամական միջոցներ ներգրավելու անհրաժեշտությունը:

5. Լրացուցիչ համաձայնագրով սահմանված կարգով և բովանդակությամբ Հիմնական համաձայնագրում կատարվում են հետևյալ փոփոխությունները. լրացում է կատարվում Հիմնական համաձայնագրի 2.2-րդ կետում, հանվում է Հիմնական համաձայնագրի 4.1-ին կետի (գ) ենթակետի երկրորդ պարբերությունը, այլ խմբագրությամբ են շարադրվում Հիմնական համաձայնագրի 4.1-ին կետի (զ) ենթակետը, Հիմնական համաձայնագրի 4.1-ին կետի (ժ) ենթակետը, Հիմնական համաձայնագրի թիվ 2 հավելվածի «Համաձայնագրի շրջանակներում կիրառվող կանոնները և ընթացակարգերը» բաժնի առաջին պարբերությունը, Հիմնական համաձայնագրի թիվ 4-8 հավելվածները: Փոփոխության է ենթարկվում նաև Հիմնական համաձայնագրով սահմանված Ծրագրի նպատակը, մասնավորապես՝ սահմանվում է, որ այն Հայաստանի Հանրապետությունում «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհային միջանցքի՝ Ագարակից դեպի Քաջարան մոտ 32 կիլոմետր հատվածի թողունակության բարձրացումը և վթարայնության նվազեցումն է՝ նախկինում սահմանված 20.5 կիլոմետրի փոխարեն:

6. Լրացուցիչ համաձայնագրով կատարվող փոփոխության արդյունքում Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

6.1. ներդրումային վարկի ստացման նպատակով Կենտրոնական գանձապետարանում բացել և վարել Հիմնական համաձայնագրի 4.1-ին (ժ) կետում նշված՝ Ծրագրի իրականացման խմբի անունով առանձին հաշվեհամար վարկի արժույթով՝ Կառավարչի համար բավարար պայմաններով, ներառյալ՝ ցանկացած հայցից, բռնագրավումից, կալանքից կամ ոչ նպատակային օգտագործումից հաշվի պատշաճ պաշտպանության ապահովումը (այսուհետ՝ Հատուկ հաշվեհամար) և Հատուկ հաշվեհամարին ներդրումային վարկի միջոցների հաշվեգրումը և Հատուկ հաշվեհամարից միջոցների ծախսումն իրականացնել Հիմնական համաձայնագրի թիվ 8 հավելվածում նշված՝ Կառավարչի կողմից սահմանված միջոցների ծախսման ընթացակարգերին համապատասխան (Լրացուցիչ համաձայնագրի 2-րդ կետ),

6.2. ապահովել Ծրագրի ծախսերի ֆինանսավորման համար սեփական բյուջեից բավարար ծավալով հատկացումների ամենամյա տրամադրումը (համաֆինանսավորում)՝ Հիմնական համաձայնագրի թիվ 4 հավելվածին համապատասխան ծախսերի՝ ըստ «Ստացողի բյուջեին» դասված կատեգորիաների, Հիմնական համաձայնագրի թիվ 4 հավելվածի 5-րդ կետով նախատեսված ծախսերի, Ստանդարտ պայմանների 2.03-րդ բաժնում նշված հարկերի վճարման համար նախատեսված ծախսերի (Լրացուցիչ համաձայնագրի 4-րդ կետ),

6.3. երաշխավորել օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան Ծրագրի իրականացման խմբի՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կամ դրա իրավահաջորդի (այսուհետ՝ **Ծրագրի իրականացման խումբ** կամ **ԾԻԽ**) ներգրավումը Հիմնական համաձայնագրի թիվ 5 հավելվածի 3-րդ կետին համապատասխան՝ ապահովելով Ծրագրի իրականացման գծով վերապահված գործառույթների կատարումը ԾԻԽ մասնագետների կողմից, ինչպես նաև վերապահված գործառույթների կատարման համար ԾԻԽ-ին անհրաժեշտ ռեսուրսների տրամադրումը (Լրացուցիչ համաձայնագրի 5-րդ կետ),

6.4. ապահովել, որ ծախսերի (1) կատեգորիայով միջոցներն առաջին հերթին ծախսվեն ներդրումային վարկի միջոցներից, և միայն ներդրումային վարկի միջոցներն ամբողջությամբ ծախսվելուց հետո (1) կատեգորիայով միջոցները ծախսվեն Հայաստանի Հանրապետության բյուջեի միջոցներից (Լրացուցիչ համաձայնագրի 7-րդ կետ, փոփոխված 4-րդ հավելվածի 4-րդ կետ),

6.5. ֆինանսավորել Ծրագրի մասով ցանկացած այլ լրացուցիչ ծախս, որը կարող է առաջանալ դրա իրականացման ընթացքում, և ավելացնել Հիմնական համաձայնագրի շրջանակում դրա ֆինանսավորման ընդհանուր գումարը (Լրացուցիչ համաձայնագրի 7-րդ կետ, փոփոխված 4-րդ հավելվածի 5-րդ կետ),

6.6. ապահովել Ծրագրի իրականացումը և Հիմնական համաձայնագրի պայմանների կատարումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան, մասնավորապես՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (կամ նրա իրավահաջորդի) վրա դնել Հիմնական համաձայնագրի պայմաններին համապատասխան Ծրագրի իրականացման պատաս-

խանատվությունը, ֆինանսների նախարարության (կամ նրա իրավահաջորդի) վրա դնել վարկի մասով վճարումներն ամբողջությամբ և ժամանակին կատարելու, Հիմնական համաձայնագրի պայմաններին համապատասխան ԾԻԽ-ի անունով Հատուկ հաշվեհամար բացելու, վարելու և դրա կարգավիճակն ապահովելու, ինչպես նաև Հիմնական համաձայնագրին համապատասխան համաֆինանսավորման համար միջոցները ժամանակին տրամադրելու պատասխանատվությունը, իսկ Ծրագրի իրականացման խմբի՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի (կամ նրա իրավահաջորդի) վրա դնել Ծրագրի իրականացման ամենօրյա աշխատանքների համար պատասխանատվությունը, ներառյալ՝ ֆինանսների կառավարումը, գնումները, հաշվառման վարումը, միջոցների նպատակային ծախսումը, արդյունավետության մոնիթորինգը և գնահատումը, ֆինանսական հաշվետվությունների և Հիմնական համաձայնագրով նախատեսված՝ Ծրագրին առնչվող այլ հաշվետվությունների ձևավորումը և տրամադրումը, արտաքին աուդիտորների ներգրավումը, բնապահպանական և սոցիալական պատասխանատվության ոլորտի և Հիմնական համաձայնագրի թիվ 2 հավելվածում նշված՝ կիրառելի այլ քաղաքականությունների և ընթացակարգերի պահանջների կատարումը (Լրացուցիչ համաձայնագրի 6-րդ կետ, փոփոխված 5-րդ հավելվածի 3-րդ կետ),

6.7. իրականացնել Ծրագրի կատարման ու դրա նպատակների ապահովման մոնիթորինգ և գնահատում՝ Հիմնական համաձայնագրի 6-րդ հավելվածի 1-ին կետում շարադրված՝ մոնիթորինգի ցուցանիշներին համապատասխան (Լրացուցիչ համաձայնագրի 9-րդ կետ, փոփոխված 6-րդ հավելվածի 1-ին կետ), պատրաստել և Կառավարչին ներկայացնել Ծրագրի մոնիթորինգի արդյունքների ամփոփմամբ հաշվետվությունները, որոնք ձևով և բովանդակությամբ բավարար են Կառավարչի համար, ներառյալ Հիմնական Համաձայնագրի 9-րդ կետի 2.1-ին ենթակետում շարադրված պահանջները (Լրացուցիչ համաձայնագրի 9-րդ կետ, փոփոխված 6-րդ հավելվածի 2-րդ կետ, ենթակետ 2.1),

6.8. ապահովել Հայաստանի Հանրապետության միջոցների հաշվին կատարված ծախսերը հաստատող առաջնային հաշվառման բոլոր փաստաթղթերի պահ- [illegible] (ներառյալ՝ պայմանագրերը, ակտերը, հաշվետվությունները, հաշիվները,

հաշիվ-վավերագրերը, ապրանքագրերը, ստացականները և այլ փաստաթղթեր) մինչև Հիմնական համաձայնագրի 6-րդ հավելվածի 2-րդ կետի 2.2-րդ ենթակետում նշված ժամկետներից այն ժամկետի լրանալը, որն ավելի ուշ է վրա հասնելու, ինչպես նաև նշված ժամկետի ընթացքում Կառավարչի ներկայացուցիչներին տրամադրել այդ հաշվառման փաստաթղթերն ուսումնասիրելու հնարավորություն (Լրացուցիչ համաձայնագրի 9-րդ կետ, ենթակետ 2.2),

6.9. Ծրագրի ավարտից հետո պատրաստել և ներկայացնել Ծրագրի ավարտի վերաբերյալ վերջնական հաշվետվությունը՝ Ստանդարտ պայմանների 4.03-րդ բաժնի «դ» ենթակետի դրույթներին համապատասխան (Լրացուցիչ համաձայնագրի 9-րդ կետ, փոփոխված 6-րդ հավելվածի 2-րդ կետ, ենթակետ 2.2),

6.10. Կառավարչի հետ համատեղ ուսումնասիրել Հիմնական համաձայնագրի 6-րդ հավելվածի 2-րդ կետով սահմանված հաշվետվությունները և հետագայում ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ Ծրագրի արդյունավետ ավարտը և դրա նպատակների իրագործումն ապահովելու համար՝ հաշվի առնելով վերը նշված հաշվետվություններում տեղ գտած եզրակացություններն ու առաջարկությունները և տվյալ հարցի վերաբերյալ Կառավարչի կարծիքները (Լրացուցիչ համաձայնագրի 9-րդ կետ, փոփոխված 6-րդ հավելվածի 3-րդ կետ),

6.11. անկախ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի կիրառվող ուղեցույցների դրույթներից՝ աշխատանքների գնումների իրականացման ժամանակ ստացված առաջարկների գնահատման ժամանակ 5 տոկոսանոց արտոնություն տրամադրել Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի մասնակից պետություններից գնման մասնակիցների առաջարկների համար՝ հաշվի առնելով նրանց գրանցման երկիրը, սեփականատերերի կազմը և Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի մասնակից չհանդիսացող պետություններից ներգրավվող ենթակապալի ծավալը (Լրացուցիչ համաձայնագրի 10-րդ կետ, փոփոխված 7-րդ հավելվածի 7-րդ կետ),

6.12. միջոցների հատկացման ընթացակարգերին վերաբերող հարցերում Համաձայնագրին չհակասող մասով կիրառել Համաշխարհային բանկի հաճախորդներին միջոցների տրամադրման տեղեկագիրը (2006 թվականի մայիս)՝ հաշվի առ-

նելով հետագա լրացումները և փոփոխությունները (Disbursement Handbook for World Bank clients, May 2006), Ծրագրերի իրականացման համար Համաշխարհային բանկի կողմից միջոցների տրամադրման ուղեցույցը (2006 թվականի մայիսի 1)՝ հաշվի առնելով հետագա լրացումները և փոփոխությունները (World Bank Disbursement Guidelines for Projects, dated May 1, 2006) (Լրացուցիչ համաձայնագրի 11-րդ կետ, փոփոխված 8-րդ հավելվածի 1-ին կետ),

6.13. միջոցների հատկացման համապատասխան հայտով՝ որպես միջոցների նպատակային օգտագործումը հաստատող փաստաթղթեր, ներկայացնել Հիմնական համաձայնագրի 8-րդ հավելվածի 4-րդ կետի 4.1-ին, 4.2-րդ, 4.3-րդ ենթակետերում նշված փաստաթղթերը (Լրացուցիչ համաձայնագրի 11-րդ կետ, փոփոխված 8-րդ հավելվածի 4-րդ կետ, պարբերություն 1),

6.14. Կառավարչին վերադարձնել ներդրումային վարկի՝ Հատուկ հաշվեհամարին ավանսավորված միջոցները, որոնց նպատակային օգտագործումը Հայաստանի Հանրապետության կողմից փաստաթղթերով չի հաստատվել ներդրումային վարկի հասանելիության ժամանակահատվածի ավարտի ամսաթվից հետո 4 (չորս) ամսվա ընթացքում (Լրացուցիչ համաձայնագրի 11-րդ կետ, փոփոխված 8-րդ հավելվածի 5-րդ կետ):

7. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 169-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ մասերով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64-րդ հոդվածներով և 74-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհային միջանցքի շինարարություն (4-րդ հերթ)» նախագծի ֆինանսավորման համար Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին» համաձայնագրի թիվ 4 լրացուցիչ համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

28 մարտի 2023 թվականի
ՍԴՈ-1681